«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2015 թվականի

Համալսարանի 2014 թվականի գիտահետազոտական գործունեության արդյունքների և 2015 թվականի խնդիրների մասին

Լսելով և քննարկելով **«Համալսարանի 2014 թվականի գիտահետազոտական գործունեության արդյունքների և 2015 թ. խնդիրների մասին»** հարցը (զեկուցող՝ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ.Ի.Վարդանյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. 2014 թ. գիտահետազոտական աշխատանքի պլանավորված ծավալն ընդհանուր առմամբ կատարված է:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են գիտական գործունեության ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման և զարգացման աշխատանքները: Ամբիոնների, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեության հետագա ակտիվացման նպատակով անցկացվել են ներքին գիտական դրամաշնորհների մրցույթներ: Համալսարանի գիտաուսումնական գործունեության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակով մեկնարկել է գիտահետազոտական խմբերին վերաբերող նախագիծը, որը դասախոսներից, ասպիրանտներից և ուսանողներից կազմված հետազոտական կոլեկտիվների ինստիտուցիոնալ աջակցության ձև է: Նախագիծը համահունչ է գիտության և կրթության միասնացման, ՀՀ-ում բարձրագույն և հետբուհական կրթության զարգացման պետական քաղաքականությանը: Գիտաուսումնական խմբերի նպատակը հետազոտական գործընթացում ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների ներգրավումն է, բարձրագույն կրթության ծրագրերի իրացման գիտական հենքի ձևավորումը և կրթական գործընթացում գիտական հետազոտությունների արդյունքների օգտագործումը:

2014 թ. գիտահետազոտական գործունեություն է իրականացվել 23 ամբիոնում, «Ամբերդ» հետազոտական կենտրոնում և 8 գիտաուսումնական խմբերում: Ամբիոնային 58 թեմաներով իրականացվել են գիտահետազոտական աշխատանքներ, կատարվել են ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի 4, գիտաուսումնական խմբերի 8 դրամաշնորհային թեմաներ, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 5 գիտական ուղղություններով և մագիստրոսական 5 խմբի հետազոտական ծրագրեր:

Ուսանողների գիտահետազոտական աշխատանքներն իրականացվել են ֆինանսավորվող բոլոր ծրագրերի և ՈՒԳԸ շրջանակներում: 2014 թ. ՈՒԳԸ 36-րդ նստաշրջանին մասնակցել է 150 ուսանող:

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ նախարարությունները ներկայացրել են հետազոտությունների առաջարկություններ. 8 նախարարություն՝ 51 թեմայի առաջարկ, որից «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գիտական խորհրդատվական խորհրդի որոշմամբ հայտարարվել է 7 թեմայի կատարման դրամաշնորհների

մրցույթ՝ սեփական միջոցների հաշվին, իսկ ՀՀ սփյուռքի նախարարությունը կֆինանսավորի մեկ թեմայի կատարումը:

Ֆինանսավորվող հետազոտություններում ընդգրկված է եղել շուրջ 150 հետազոտող. մոտ 50%-ը՝ ասպիրանտներ, մագիստրանտներ:

Ընդհանուր առմամբ, գիտության ֆինանսավորումը կազմել 122.1 մլն դրամ, որից 22.1 մլն դրամը՝ պետբյուջեից:

2014 թ. հրատարակվել է 2 դասագիրք, 13 ուսումնական ձեռնարկ, 42 մենագրություն, 3 գիտական աշխատանք, 4 դասախոսությունների նյութեր, 536 գիտական հոդված, 20 ուսումնամեթոդական աշխատանք: Հոդվածներից 97-ը լույս են տեսել արտասահմանյան պարբերականներում: Հրապարակումների մեծ մասում արտացոլված են հետազոտությունների արդյունքները: Գիտական ամսագրերում 2014 թվականին, 2011 թվականի համեմատությամբ, 1.5 անգամ մեծացել է համալսարանի գիտնական դասախոսների, ասպիրանտների ու մագիստրանտների հրապարակումների թիվը: Միևնույն ժամանակ, շուրջ 2.6 անգամ ավելացել է հրապարակումների քանակը միջազգային ամսագրերում: Հրապարակված գիտական հոդվածների 54.6%-ը 7 ամբիոններից են (կառավարման՝ 12.3%, միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման՝ 9.3%, միջազգային տնտեսական հարաբերությունների՝ 8.2%, բանկային գործի և ապահովագրության՝ 7.1%, տնտեսագիտության տեսության՝ 6.1%, տնտեսամաթեմատիկական մեթոդների՝ 5.8%, մարքեթինգի՝ 5.8%):

2014 թ. հոկտեմբերի 29-31-ը անցկացվել է «Զարգացման ժամանակակից մարտահրավերներ» խորագրով համալսարանի 24-րդ գիտաժողովը: Լիագումար նիստում «Հայաստանի Հանրապետությունում գիտության ոլորտի բարեփոխումների վիճակը և հեռանկարները» զեկուցումով հանդես է եկել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Հարությունյանը, «Գիտական հետազոտությունների և ուսումնական գործընթացների ինտեգրման արդի հիմնախնդիրները» զեկուցումով՝ համալսարանի գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Վարդանյանը: Գիտաժողովի աշխատանքները կազմակերպվել են «ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գերակայությունները», «Ֆինանսական շուկաներ և ենթակառուցվածքներ», «Միջազգային տնտեսական համագործակցություն և կրթության որակի ապահովում», «Կայուն զարգացման ապահովում» խորագրերով՝ համապատասխան բաժանմունքներում. ներկայացվել է 200-ից ավելի զեկուցում:

2014 թ. դեկտեմբերի 20-ին ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղում անցկացվել է գիտաժողով «Գիտակրթական քաղաքականության զարգացման հեռանկարները ՀՀ մարզերում» խորագրով, ուր ներկայացվել է ավելի քան 40 զեկուցում:

2014 թ. անցկացվել են շուրջ 40 գիտական սեմինարներ, կազմակերպվել են քննարկումներ՝ նվիրված երկրի ֆինանսական կայունությանը, սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներին առնչվող տարբեր հարցերի:

Համալսարանի աշխատակիցները 2014 թվականին Շվեյցարիայում, Ավստրիայում, Մալայզիայում, Լեհաստանում, Իսպանիայում, Շվեդիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Ուկրաինայում, Վրաստանում մասնակցել են գիտաժողովների:

Միաժամանակ, գիտական խորհուրդն արձանագրում է՝ դեռևս առկա են հիմնախնդիրներ.

- երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման գործընթացներում համալսարանի ներուժը լիարժեք չի իրացվում,
- թերի է տնտեսության մասնավոր հատվածի հետ համագործակցությունը,
- փոքրաթիվ են տնտեսագիտության բնագավառի վերջին նվաճումների հիման վրա ստեղծված մենագրությունները, դասագրքերը և ուսումնական ձեռնարկները,
- սակավաթիվ են արտասահմանյան առաջավոր գրախոսվող պարբերականներում գիտական հրապարակումները,
- անհամաչափություն է նկատվում ամբիոնների գիտահետազոտական ակտիվության և գիտական հրապարակումների առումներով,
- դեռևս ցածր է գիտաժողովներին, գիտական սեմինարներին և տարբեր քննարկումներին պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և ուսանողների մասնակցության մակարդակը,
- հետազոտությունների ֆինանսավորման աղբյուրները բազմազանեցված չեն:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. **2015 թ. առաջնահերթ խնդիրներ համարել՝**
   - ՀՀ նախարարություններից ստացված հետազոտության թեմաների կատարման պատշաճ կազմակերպումը և իրականացումը,
   - հետազոտությունների բնագավառում տնտեսության մասնավոր հատվածի հետ համագործակցության համապատասխան քայլերի ձեռնարկումը,
   - արտաքին դրամաշնորհային ծրագրերին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցության ընդլայնումը,
   - գիտական հետազոտությունների և կրթական գործընթացների միասնացման խորացումը՝ ուսանողների շրջանում ինքնուրույն հետազոտական հմտությունների զարգացման նպատակով,
   - հայաստանյան և միջազգային հեղինակավոր համաժողովներին համալսարանի գիտնականների, ասպիրանտների և ուսանողների մասնակցության ընդլայնումը,
   - համալսարանի գիտական կոլեկտիվների հետ համագործակցության մեջ տեղական և արտասահմանյան առաջատար գիտնականների ներգրավումը,
   - Վեբ օֆ սայնսի (Web of Science), Գուգլ սքոլար (Google Scholar) և Սկոպուսի (SCOPUS) տվյալների բազայում ներառված հրատարակություններում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հրապարակումների ծավալի մեծացումը:

2. **Հանձնարարել՝**

   1) **ֆակուլտետների դեկաններին՝**

- ֆակուլտետի խորհրդում պարբերաբար քննարկել գիտահետազոտական գործունեությանը վերաբերող հարցեր,
- մենագրությունները, դասագրքերը, ուսումնական ձեռնարկները և ուսումնամեթոդական այլ նյութեր հրապարակման երաշխավորելիս կարևորել դրանցում ինչպես համալսարանական, այնպես էլ արտաքին վերջին հետազոտությունների արդյունքների արտացոլումը,
- ատենախոսությունների թեմաները երաշխավորելիս հաշվի առնել ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին, գիտության գերակա ուղղություններին, համալսարանի, ինչպես նաև արտասահմանյան գլխավոր հետազոտական ուղղություններին դրանց համահունչ լինելը,
- ապահովել ամբիոնների գիտահետազոտական ակիվությունը,
- նպաստել ուսանողների գիտահետազոտական ակտիվության մակարդակի բարձրացմանը, ֆակուլտետի ՈՒԳԸ աշխատանքներում ավելի մեծ թվով ուսանողների ներգրավմանը:

2) **ամբիոնների վարիչներին՝**
- ապահովել գիտական հետազոտություններում ամբիոնի դասախոսների, ասպիրանտների ներգրավվածության աստիճանի մշտական բարձրացումը,
- նպաստել գիտական հետազոտությունների գործնական ուղղվածության ապահովմանը և դրանց արդյունքների ներդրմանը պետական և մասնավոր հատվածներում, ուսումնամեթոդական նյութերում և կրթական գործընթացներում,
- նպաստել միջազգային համաժողովներին համալսարանի դասախոսների, գիտաշխատողների, ասպիրանտների և ուսանողների մասնակցության աստիճանի բարձրացմանը,
- ապահովել ամբիոնային հետազոտությունների, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի և թեկնածուական ատենախոսությունների թեմաների համապատասխանությունը ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին, գիտության գերակա ուղղություններին, համալսարանի, ինչպես նաև արտասահմանյան գլխավոր հետազոտական ուղղություններին,
- ապահովել ամբիոնի աշխատակիցների ակտիվ մասնակցությունը համալսարանում անցկացվող սեմինարներին, գիտաժողովներին,
- ապահովել ամբիոնի աշխատակիցների գիտական հետազոտությունների արդյունքների պատշաճ և կանոնավոր հրապարակումները,
- ապահովել ՈՒԳԸ աշխատանքներում և ֆինանսավորվող հետազոտություններում ուսանողների մասնակցության բարձր աստիճան,
- ակտիվացնել ամբիոնի աշխատակիցների մասնակցությունը միջազգային գիտաժողովներին, հրապարակումները միջազգային գիտական պարբերականներում:

3) «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն **Ս.Ս.Ավետիսյանին՝**
- ակտիվացնել կենտրոնի ծրագրերի աշխատանքը,

- մինչև 15.02.2015 թ. կազմակերպել ՀՀ նախարարություններից ստացված հետազոտության առաջարկությունների հիման վրա հայտարարված մրցույթի արդյունքների ամփոփումը և ապահովել հաղթողների հետ պայմանագրերի կնքումը մինչև 28.02.2015 թ.,
- ապահովել 2014 թ. կատարված հետազոտությունների արդյունքների հրապարակումը մինչև 2015 թ. ապրիլի 30-ը,
- ապահովել ՀՀ նախարարությունների թեմաների կատարման ընթացքին համապատասխան նախարարության ներկայացուցչի տեղեկացումը,
- ակտիվացնել աշխատանքը պետական կառավարման մարմինների հետ՝ նրանց հետաքրքրող հիմնախնդիրներին առնչվող հետազոտությունների իրականացման համար,
- զարգացնել համագործակցությունը պետական և մասնավոր հատվածների հետ,
- աշխատանքներ ծավալել մասնավոր հատվածից հետազոտությունների պատվերների ստացման ուղղությամբ,
- ստեղծել տվյալների բանկ և աշխարհի առաջավոր հետազոտական կենտրոնների հետազոտությունների արդյունքների շտեմարաններ՝ համալսարանի հետազոտողներին տեղեկատվական աջակցության նպատակով,
- շարունակել և ընդլայնել հետազոտություններում մագիստրանտների ընդգրկման աշխատանքները և առաջարկություններ ներկայացնել բակալավրիատի օժտված ուսանողներին դրանցում ներգրավման նպատակահարմարության մասին,
- երկամսյա ժամկետում մշակել հետազոտական թեմաների արժեքի որոշման մեթոդաբանություն,
- ապահովել կենտրոնի հետազոտությունների արդյունքների հրապարակումների տարածումը շահառուների շրջանում:
- մինչև 31.03.2015 թ. պատրաստել և հրապարակել կենտրոնի տարեկան զեկույցը:

4) ՈՒԳԸ նախագահ **Վ.Գ.Գևորգյանին՝**
- բարձրացնել ՈՒԳԸ աշխատանքներին ուսանողների մասնակցության աստիճանը,
- լավագույններին երաշխավորել ֆինանսավորվող հետազոտական ծրագրերում ընդգրկելու համար:

5) գիտության բաժնի պետ **Խ.Ա.Մխիթարյանին՝**
- մինչև 2015 թ. մարտի 31-ը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2012-2017 թթ. գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության զարգացման հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը,
- մինչև 01.03.2015 թ., ըստ գիտական հետազոտությունների ուղղությունների, ներկայացնել առաջարկություն 2015 թ. բյուջեով գիտության համար նախատեսված միջոցների բաշխման վերաբերյալ,

- ներկայացնել առաջարկություն՝ ուղղությունների գիտական ղեկավարներ նշանակելու և հետազոտական խմբերում ընդգրկվող դասախոսների, ասպիրանտների և ուսանողների վերաբերյալ, 2015 թ. մարտին, ըստ հետազոտական ուղղությունների, ապահովել հետազոտությունների մեկնարկը,
- ակտիվացնել պետական բյուջեից ֆինանսավորմամբ և արտասահմանյան դրամաշնորհների ստացման ուղղությամբ աշխատանքները,
- մինչև 01.04.2015 թ. մշակել և ներկայացնել առաջարկություն ֆինանսական հենքով ուսումնագիտական խմբերի մրցույթի անցկացման, ինչպես նաև գործող խմբերի աշխատանքի երկարաձգման նպատակահարմարության վերաբերյալ:

3. **Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Գ.Վարդանյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

05.02.2015 թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ